ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
ընդհանուր ժողովի
19 հոկտեմբերի 2019թ. թիվ 1-Լ
որոշմամբ

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք. Երևան, 2019թ.

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԲԱՆ

Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը սահմանում է փաստաբանական էթիկայի սկզբունքները և փաստաբանի վարքագծի կանոնները, որոնք հիմնված են փաստաբանության բարոյական չափանիշների և ավանդույթների, ինչպես նաև փաստաբանական գործունեության միջազգային ստանդարտների և կանոնների վրա:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնագրքով:

1.1. Փաստաբանի դերը հասարակության մեջ

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ՝

- **վստահորդի նկատմամբ:** Փաստաբանը վստահորդին բացատրում է նրա իրավունքները, պարտականությունները և դրանց իրացման իրավական հետևանքները, ինչպես նաև ջանասիրաբար ներկայացնում է իր վստահորդի շահերը.
- **դատարանների և այլ մարմինների առջև**, որտեղ փաստաբանը ներկայացնում է վստահորդի շահերը: Այս հարաբերություններում փաստաբանը պետք է հարգանքով վերաբերվի այն մարմիններին, որոնց հետ նա առնչվում է, պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը, ինչպես նաև արդարադատության պատշաճ և իրավաչափ իրականացմանը.
- **փաստաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:** Փաստաբանը հանդիսանալով փաստաբանական համայնքի (հանրույթի) պատասխանատու

անդամ, պետք է մշտապես կատարելագործի իր գիտելիքները, հարգանք ցուցաբերի փաստաբանների նկատմամբ, ինչպես նաև պետք է խուսափի փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը խաթարող վարքագծից:

- **հասարակության նկատմամբ,** որի համար ազատ և անկախ փաստաբանի մասնագիտության առկայությունը՝ համակցված այդ մասնագիտությանը վերաբերող կանոնների նկատմամբ հարգանքով, մարդու իրավունքների պաշտպանության կարևոր միջոց է: Փաստաբանն իր գործունեությամբ պետք է նպաստի հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, այդ թվում՝ անձնական օրինակով ցույց տալով իրավունքի պաշտպանի օրինակելի կերպարը:

1.2. Մասնագիտական գործունեության սկզբունքների բնույթը

Մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները:

Փաստաբանի կողմից այդ սկզբունքների ոչ ճիշտ կիրառումը կարող է հանգեցնել կարգապահական տույժերի:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Սույն կանոնագիրքը տարածվում է նաև փաստաբանի հրապարակային վարքագծի նկատմամբ, բացառությամբ այն դեպքի, երբ փաստաբանն այդ իրավիճակում ակնհայտ գործել է այլ (ոչ փաստաբանի) կարգավիճակով:

1.3. Կանոնագրքի նպատակը

Փաստաբանների գործունեության աճը անհրաժեշտություն է ստեղծել հասարակության շահերի շրջանակում ձևակերպել համընդհանուր կանոններ, որոնք կվերաբերեն Հայաստանի Հանրապետության բոլոր փաստաբաններին:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կանոնները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Պալատի կանոնադրության, ինչպես նաև սույն Կանոնագրքի 1.1 կետի և ընդհանուր սկզբունքների համատեքստում:

Փաստաբանի վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման հիմքով հարուցվող կարգապահական վարույթի արդյունքում ընդունվող որոշումը պետք է հիմնվի պատասխանատվության անհատականացման սկզբունքի վրա և Կանոնագրքի կանոնները կիրառելիս հաշվի առնի կոնկրետ իրավախախտման փաստակազմը, փաստաբանի պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները:

Կանոնագիրքը կազմված է նաև ուղղակի ներգործություն և իրավական հետևանքներ առաջացնող փաստաբանի վարքագծի էթիկական շրջանակները կանխորոշող սկզբունքներից (ընդհանուր կանոններից) և հատուկ կանոններից: Կանոնագրքի որոշ սկզբունքների իրացման կառուցակարգը նախատեսված է հատուկ կանոնների միջոցով: Եթե փաստաբանի արարքը բնութագրող հատկանիշները նախատեսված են ընդհանուր և հատուկ կանոններով, ապա փաստաբանի արարքի որակումը կատարվում է միայն հատուկ կանոնով:

Կանոնագրքի մի շարք կանոններ, իրենց հերթին ունեն բլանկետային բնույթ, և դրանցով նախատեսված կանոնակարգումն ավարտուն բնույթ է ստանում այլ իրավական ակտերի համապատասխան դրույթների հետ համակցության մեջ:

Կանոնագրքի կանոնները կիրառելիս հարկ է նկատի ունենալ, որ փաստաբանի վարքագծի կանոնակարգումը չի սահմանափակվում Կանոնագրքով և փաստաբանի՝ որպես մասնավոր և հանրային հարաբերությունների սուբյեկտի վարքագիծ ենթակա է այլ իրավական ակտերի նորմատիվ կարգավորմանը: Փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը չի բացառում միևնույն արարքի համար նրա նկատմամբ իրավական պատասխանատվության այլ միջոցների կիրառումը:

Պալատի խորհուրդն իրավասու է իր նախաձեռնությամբ կամ փաստաբանի դիմումի հիման վրա պարզաբանումներ տալ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոնների մեկնաբանման և/կամ կիրառման վերաբերյալ: Պալատի խորհրդի որոշմամբ տրված պարզաբանումներն իրավական ուժ ունեն և հրապարակվում են Պալատի կայքում, եթե այդ որոշմանը կողմ է քվեարկել Պալատի խորհրդի առնվազն ինը անդամ: Փաստաբանի դիմումը պետք է պարունակի նաև վարքագծի կանոնի պարզաբանման իր տարբերակը: Փաստաբանների պալատի խորհուրդը

փաստաբանի դիմումը քննարկում է 60 օրվա ընթացքում:

1.4. Սահմանումներ

- ***Պալատ*** - Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ.
- ***Օրենք*** - «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք.
- ***Խորհուրդ*** - Պալատի խորհուրդ.
- ***Կարգապահական հանձնաժողով*** - փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործն ըստ էության քննող և որոշում կայացնող մարմին .
- ***փաստաբան*** - Պալատի անդամ հանդիսացող անձ, ով ունի փաստաբանական գործունեության արտոնագիր.
- ***փաստաբանական գրասենյակ*** - (1) առևտրային կազմակերպություն, որն իրականացնում է փաստաբանական գործունեություն և նրա կանոնադրական կապիտալում 100 տոկոս մասնակցություն ունի փաստաբանը, իսկ գործադիր մարմնի (գործադիր տնօրեն, տնօրեն, կոլեգիալ գործադիր մարմին) լիազորությունները իրականացնում է փաստաբանը(ները), կամ (2) անհատ ձեռնարկատեր փաստաբան, որն իրականացնում է փաստաբանական գործունեություն անձամբ կամ աշխատակազմի միջոցով, կամ (3) ոչ առևտրային կազմակերպություն, որն իրականացնում է փաստաբանական գործունեություն.
- ***օժանդակ անձնակազմ*** - փաստաբանական գրասենյակում աշխատող ֆիզիկական անձինք (այդ թվում՝ ոչ փաստաբանները).
- ***վստահորդ*** - ֆիզիկական կամ իրավաբանական անձ (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը. վստահորդը նաև հանդիսանում է պատվիրատու.
- ***պատվիրատու*** - վստահորդ չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ կնքել է պայմանագիր վստահորդի շահերը ներկայացնելու համար.
- ***հակառակորդ կողմ*** - փաստաբանի վստահորդի հետ վեճ ունեցող անձը, կամ փաստաբանի վստահորդի դատավարական հակառակ կողմը.
- ***հոնորար*** - փաստաբանական ծառայության համար նախատեսված վարձատրությունը.
- ***Ընդունող պետություն*** - այլ պետություն, որտեղ ՀՀ փաստաբանը փաստաբանական գործունեություն է իրականացնում.
- ***հանրային նշանակության կազմակերպություն*** - ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական

ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում, ինչպես նաև ֆինանսական շուկայում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ (այդ թվում՝ բանկեր, ապահովագրական կազմակերպություններ, գազի, ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարում իրականացնող կազմակերպություններ).

- ***հանրային պաշտպան*** - Պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող Հանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբան. Հանրային պաշտպանի կարգավիճակին հավասարեցվում է հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանը, որը կամավոր ընդգրկվել է հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող անվճար իրավաբանական օգնություն տրամադրող անձանց ցուցակում՝ անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու գործի մասով.

- ***տարի*** - օրացուցային տարի (12 ամիս), որը հաշվարկվում է վարքագծի կանոնում նշված օրվա կամ իրադարձության հաջորդ օրվանից.

- ***գլուխ, կետ կամ ենթակետ*** - Կանոնագրքի կառուցվածքային միավորներն են: Դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը իրենց հերթին բաժանված են համարակալված ենթակետերի: Զգալի ծավալով համասեռ կետերը միավորված են գլուխներում.

- ***կարգապահական խախտում*** - փաստաբանի կողմից Օրենքի, Պալատի կանոնադրության և/կամ սույն Կանոնագրքի որևէ կանոնի խախտում, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Կարգապահական խախտում է համարվում նաև այն արարքը, որը դրսևորվում է՝

ա. այլ փաստաբանի՝ Օրենքի, Պալատի կանոնադրության կամ Կանոնագրքի խախտմանը դրդելով կամ խախտման կատարմանն օժանդակելով կամ խախտման կատարումը կազմակերպելով.

բ. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարելով.

գ. անձնական կամ իր վստահորդի համար ցանկալի արդյունքի հասնելու նպատակով այլ մարմնի կամ պաշտոնատար անձի վրա ակնհայտ անօրինական ազդեցություն գործադրելով.

- ***դիտավորությամբ կատարված կարգապահական խախտում*** - փաստաբանի վարքագծի կանոնին հակասող արարքը (կարգապահական խախտումը) համարվում է դիտավորությամբ կատարված, եթե փաստաբանը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ (փաստաբանի վարքագծի կանոնին հակասող) բնույթը.

- ***կոպիտ անփութությամբ կատարված կարգապահական խախտում*** - փաստաբանի վարքագծի կանոնին հակասող արարքը (կարգապահական խախտումը) համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե փաստաբանը

չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել.

- ***ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում*** – Օրենքի, այդ թվում 19-րդ և 20-րդ հոդվածներով (ներառյալ սույն կանոնագրքով ուղղակի նշված կանոնով) նախատեսված պարտականությունների և վարքագծի կանոնների դիտավորությամբ կատարված խախտում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ.

- ***շահերի բախում*** - փաստաբանի երկու կամ ավելի վստահորդների մասնավոր շահերի կամ վստահորդի մասնավոր շահերի և փաստաբանի մասնավոր շահերի իրական կամ ողջամտորեն հավանական անհամատեղելիություն: Շահերի բախումն ընդգրկում է, սակայն, չի սահմանափակվում հետևյալ դեպքերով՝

ա. փաստաբանի կողմից իր վստահորդի շահերի ներկայացումն ուղղակիորեն վնասում է փաստաբանի այլ վստահորդի շահերին.

բ. առկա է անմիջական ռիսկ, որ փաստաբանի կողմից իր մեկ կամ մի քանի վստահորդների շահերի պաշտպանությունն էապես կսահմանափակի իր այլ վստահորդի նկատմամբ փաստաբանի պարտականությունների կատարումը.

- ***այլ մարմիններ*** - պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ, այդ թվում՝ քրեական հետապնդում իրականացնող մարմիններ, վարչարարություն և վարչական վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմիններ:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

2.1. Անկախություն

Իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար:

Այս անկախությունը անհրաժեշտ է նաև ոչ վիճելի դեպքերում, և դատավարությունների ժամանակ:

Փաստաբանը պարտավոր է նաև անկախ լինել իր վստահորդից:

Իր վստահորդի շահերը ներկայացնելիս փաստաբանը պետք է զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք փաստաբանին կարող են նույնացնել իր վստահորդի հետ: Փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների շրջանակում հօգուտ վստահորդի շահերի իրականացված գործողությունները չեն կարող համարվել վստահորդի հետ նույնացում:

2.2. Վստահություն և հարգանք փաստաբանության նկատմամբ

2.2.1 Փաստաբանի մասնագիտական անկախությունը, պարկեշտությունը, ազնվությունը և բարեխղճությունը փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ քաղաքացու կամ հասարակության վստահության անհրաժեշտ պայմաններ են: Վստահության չարաշահումը անհամատեղելի է փաստաբանի կոչման հետ:

Վստահության հարաբերություններ կարող են գոյություն ունենալ միայն այն դեպքում, երբ փաստաբանի անձնական պատիվը, ազնվությունը և բարեվարքությունը կասկածից վեր են: Փաստաբանի համար այս ավանդական արժեքները մասնագիտական պարտականություններ են:

2.2.2 Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

2.2.3 Կանոնագրքով սահմանված սկզբունքներն ավելի բարձր են վստահորդի կամքի համեմատությամբ: Արգելվում է կատարել Օրենքի, Պալատի կանոնադրության կամ սույն Կանոնագրքով նախատեսված կանոնների խախտմանն ուղղված վստահորդի ցանկությունները կամ պահանջները:

2.3. Գաղտնիություն

2.3.1 Գաղտնիությունը փաստաբանի գործունեության էությունն է, այսինքն՝ վստահորդը փաստաբանին հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք նա չի փոխանցի ուրիշների, և փաստաբանը պետք է այդ տեղեկատվության տիրապետողը լինի գաղտնիության հիմքի վրա:

2.3.2 Փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի կողմից տրված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և

ապացույցները (նյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:

Գաղտնիության անորոշակիության դեպքում վստահություն լինել չի կարող: Հետևաբար՝ գաղտնիությունը փաստաբանի առաջնային և հիմնական իրավունքն ու պարտականությունն է:

Փաստաբանի պարտականությունը գաղտնիության վերաբերյալ ծառայում է արդարադատության իրականացմանը և վստահորդի շահերին:

2.3.3 Փաստաբանը պետք է պահպանի այն ամբողջ տեղեկատվության գաղտնիությունը, որի մասին նա տեղեկանում է իր մասնագիտական գործունեության ընթացքում:

2.3.4 Գաղտնիության պարտականությունը ժամանակով սահմանափակված չէ:

2.3.5 Փաստաբանական գրասենյակը կամ փաստաբանը պարտավոր է իր օգնականների, աշխատակիցների և նրա կողմից այդ գործում ներգրավված մասնագիտական ծառայություն մատուցող անձի հետ կնքել տեղեկատվության չբացահայտման պայմանագիր կամ դրա վերաբերյալ դրույթներ ամրագրել նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրով:

2.3.6 Փաստաբանական գաղտնիքի հրապարակում թույլ է տրվում միայն Օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

2.3.7 Եթե փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ պայմանագիր է կնքել վստահորդ չհանդիսացող պատվիրատուն, ապա վստահորդից իր լիազորությունների վերաբերյալ համապատասխան հավաստում ստանալուց հետո փաստաբանը պետք է զերծ մնա պատվիրատուին վստահորդի գործի հետ կապված որևէ տեղեկատվության տրամադրումից, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է վստահորդի համաձայնությունը:

2.3.8 Կանոնագրքի 2.3 կետի կիրառման իմաստով վստահորդ է համարվում ցանկացած անձ, որն իրավաբանական օգնություն ստանալու նպատակով տեղեկություն է տրամադրել փաստաբանին կամ փաստաբանական գրասենյակին:

2.4. Այլ փաստաբանական միությունների և իրավական հասարակությունների կանոնների նկատմամբ հարգանք

Արտասահմանում գործունեություն իրականացնելիս փաստաբանը կարող է պարտադրված լինել կիրառել Ընդունող պետության համապատասխան փաստաբանական կառույցի մասնագիտական կանոնները:

2.5. Անհամատեղելի գործունեություն

2.5.1 Որպեսզի փաստաբանն իր գործունեությունն իրականացնի անկաշկանդ, անկախ և արդարադատություն իրականացնելու իր պարտականության հետ համահունչ՝ նրան արգելվում է փաստաբանական գործունեություն իրականացնել պետական կամ համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամանակ:

2.5.2 Փաստաբանը կարող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին մատուցել փաստաբանական ծառայություն:

2.6. Վստահորդի շահերը

2.6.1 Պահպանելով Օրենքի, կանոնադրության և Կանոնագրքի նկատմամբ պահանջները՝ փաստաբանը պարտավոր է միշտ պաշտպանել իր վստահորդի շահերը և գերադասել դրանք իր անձնական և փաստաբան գործընկերների շահերից:

2.6.2 Անկախ նրանից, թե փաստաբանի հետ պայմանագիր է կնքել անձամբ վստահորդը, թե պատվիրատուն, փաստաբանը պետք է առաջնորդվի բացառապես վստահորդի շահերով:

2.6.3 Փաստաբանը, իր վստահորդի շահերից ելնելով, պետք է ձեռնարկի ողջամիտ ջանքեր վերջինիս գործի դատական, վարչական, արբիտրաժային կամ իրավական գործընթացի արագ իրականացմանը նպաստելու համար:

2.6.4 Սույն կանոնագրքի 2.7.2 ենթակետի և 3-րդ գլխով նախատեսված կանոնների խախտման հիմքով՝ հաշվի առնելով վստահորդ-փաստաբան հարաբերություններից բխող առանձնահատկությունները, կարգապահական վարույթ կարող է հարուցվել միայն վստահորդի (այդ թվում՝ նախկին) հաղորդման հիման վրա, բացառությամբ նույն գլխի 3.1.6, 3.1.7, 3.1.8, 3.1.9, 3.1.10, 3.2.1, 3.2.5, 3.5.1, 3.5.3, 3.5.4 ենթակետերից որևէ մեկում նշված կանոնի խախտման դեպքի:

2.7. Ձեռնհասություն

2.7.1 Փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:

2.7.2 Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն,

վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

2.8. Գիտելիքների կատարելագործում

2.8.1 Փաստաբանը պետք է շարունակաբար կատարելագործի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունը, ինչպես նաև հետևի օրենսդրության փոփոխություններին:

2.8.2 Փաստաբանը պարտավոր է Պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել Օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:

2.9. Պալատի հետ փոխհարաբերություն

2.9.1 Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:

2.9.2 Փաստաբանը պարտավոր է կատարել (հարգել) Պալատի մարմինների և նախագահի՝ իրենց իրավասության սահմաններում ընդունած որոշումները, ինչը չի բացառում դրանց նկատմամբ քննադատական վերաբերմունք ունենալը ու օրենքով սահմանված դեպքերում և կարգով դրանց բողոքարկումը:

2.9.3 Փաստաբանը չի կարող Պալատին ներկայացնել սուտ տեղեկություններ:

2.9.4 Փաստաբանը պարտավոր է էլեկտրոնային հասցե ունենալ և այն տրամադրել Պալատին՝ իր հետ կապ հաստատելու նպատակով:

2.9.5 Փաստաբանը չի կարող Պալատի խորհրդի անդամների, նախագահի, որակավորման հանձնաժողովի անդամների կամ կարգապահական հանձնաժողովի անդամների նկատմամբ վիրավորական կամ զրպարտչական գործողություն իրականացնել (այդ թվում՝ վիրավորական քննադատություն), կապված վերջիններիս լիազորությունների իրականացման հետ: Սույն ենթակետում նշված արգելող կանոնը չի բացառում նրանց նկատմամբ փաստաբանի քննադատական վերաբերմունք արտահայտելը ու օրենքով սահմանված դեպքերում և կարգով նրանց գործողությունների բողոքարկումը:

2.9.6 Սույն Կանոնագրքի 2.9 կետում նշված հիմքով կարգապահական վարույթ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ նաև Պալատի աշխատակցի դիմումը:

2.9.7 Փաստաբանը ցուցանակում կամ անհատականացման այլ

միջոցներում կարող է օգտագործել «ՀՀ փաստաբանների պալատ» բառերը և դրա հոլովաձևերը միայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված դեպքերում և կարգով:

2.10. Փաստաբանի գործունեության հրապարակայնությունը

2.10.1 Փաստաբանը, ելնելով իր վստահորդի շահերից, կարող է հրապարակայնացնել իր գործունեությունը կոնկրետ գործով: Սույն կետում նշված իրավունքից օգտվելիս փաստաբանը պարտավոր է հաշվի առնել նախաքննության մարմնի կողմից կիրառված նախաքննության տվյալների հրապարակման սահմանափակումը, ինչպես նաև դատարանի որոշմամբ գործի քննության հրապարակայնության սահմանափակումից բխող պահանջները:

2.10.2 Սույն կետում նշված հրապարակայնորեն գործը ներկայացնելուց առաջ փաստաբանը պարտավոր է համաձայնեցնել վստահորդի հետ, բացառությամբ, երբ վստահորդը գտնվում է վախի կամ այլ ազդեցության ներքո և փաստաբանը փորձում է վստահորդի շահերից ելնելով հրապարակային եղանակով հանդես գալով վերացնել կամ բացահայտել այդ ազդեցությունը:

2.10.3 Բոլոր դեպքերում, վստահորդը կարող է պահանջել փաստաբանից դադարեցնել հրապարակայնորեն ներկայացնել գործը:

2.10.4 Փաստաբանը կամ փաստաբանական գրասենյակը կարող է իր կայքէջում կամ իր գովազդային նյութերում տեղադրել իր վստահորդների (այդ թվում՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) մասին տվյալներ միայն վստահորդի գրավոր համաձայնությամբ: Սույն ենթակետում նշված կանոնը չի տարածվում Կանոնագրքի 2.10.1-2.10.3 և 2.10.5 ենթակետերում նշված դեպքերում փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հրապարակային վարքագծի նկատմամբ:

2.10.5 Այն դեպքում, երբ փաստաբանի վստահորդի վճիռը հրապարակային է (տեղադրված է համացանցում), ապա փաստաբանը կամ փաստաբանական գրասենյակը կարող է իր կայքէջում կամ իր նյութերում վերլուծել այդ գործը:

2.11. Փաստաբանական գործ

2.11.1 Փաստաբանը կամ փաստաբանական գրասենյակը պարտավոր է յուրաքանչյուր քրեական, քաղաքացիական կամ վարչական վարույթի վերաբերյալ կազմել համապատասխան փաստաբանական գործ (թղթապանակ), որտեղ պետք է կցվեն վարույթի հիմնական նյութերը: Սույն ենթակետում նշված գործը գտնվում է փաստաբանական գաղտնիքի

պաշտպանության տակ և փաստաբանը կամ փաստաբանական գրասենյակն իրավունք չունի դրանք տրամադրել որևէ երրորդ անձի (այդ թվում՝ այլ մարմիններին), բացառությամբ փաստաբանի և նրա վստահորդի որոշած, ինչպես նաև Օրենքով նախատեսված դեպքերի:

2.11.2 Փաստաբանական գործի պահպանման նվազագույն ժամկետը սահմանվում է երեք տարի՝ գործի ավարտից հետո: Փաստաբանական գործը կարող է պահվել էլեկտրոնային եղանակով:

2.11.3 Այն դեպքում, երբ փաստաբանը անհատույց իրավական օգնություն է ցույց տվել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, և միևնույն ժամանակ հանդիսանում է փաստաբանական գրասենյակի մասնակից կամ անհատ ձեռնարկատեր կամ փաստաբանական գրասենյակի աշխատակից, պետք է այդ գործն առանձնացված հաշվառի ձեռնարկատիրական հիմունքներով կատարված մյուս փաստաբանական գործերից:

2.12. Փաստաբանի գործունեության իրավապաշտպան բնույթը

2.12.1 Փաստաբանական գործունեությունը իրավապաշտպան գործունեություն է: Փաստաբանի հիմնական նպատակը վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալն է:

2.12.2 Փաստաբանը կարող է իրավաբանական օգնություն ցույց տալ նաև անհատույց: Պալատը խրախուսելի է համարում փաստաբանների կողմից ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց իրավաբանական օգնություն ցույց տալու գործողությունները:

ԳԼՈՒԽ 3. ՎՍՏԱՀՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հանձնարարության ընդունումը

3.1.1 Փաստաբանը չպետք է վարի վստահորդի գործը, եթե բացակայում է այդ վստահորդի հանձնարարությունը, բացառությամբ 3.1.2 ենթակետում նշված դեպքերի:

3.1.2 Փաստաբանը կարող է վարել գործը, եթե՝

- նրան է դիմել վստահորդի ազգականը կամ ծանոթը.
- նրան է դիմել վստահորդի փաստաբանը կամ լիազոր ներկայացուցիչը:

Սույն ենթակետում նշված հանձնարարությունն ընդունելուց հետո փաստաբանը պարտավոր է ողջամիտ ժամկետում վստահորդից կամ նրա լիազոր ներկայացուցչից ստանալ իր լիազորությունների վերաբերյալ համապատասխան հավաստում: Այդպիսի հավաստմանը կարող է հավասարեցվել օրենքով սահմանված փաստաբանի անունով տրված

լիազորագիրը:

Երբ փաստաբանին հանձնարարություն տվող անձի ինքնությունը, իրավասությունը և լիազորությունը պարզ չեն և դրանք չեն պարզվել նույնիսկ փաստաբանի ջանքերի արդյունքում, ապա փաստաբանը պարտավոր է հրաժարվել հանձնարարությունից:

3.1.3 Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

3.1.4 Վճարովի հիմունքներով փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրում պետք է նախատեսվի՝

- հոնորարի չափը և վճարման կարգը.
- հանձնարարության բնույթը և ծավալը (ատյանը, փուլը և այլն) կամ այն որոշելու չափորոշիչները:

3.1.5 Անհատույց հիմունքներով իրավաբանական օգնություն ցույց տալու դեպքում, փաստաբանի և վստահորդի միջև պայմանագիր կնքելը ցանկալի է, հետագայում նրանց միջև առկա տարաձայնությունները լուծելու նպատակից ելնելով:

3.1.6 Եթե վստահորդի հանձնարարությունը կամ նրա համար ցանկալի արդյունքի հասնելու միջոցները օրինական չեն, ապա փաստաբանը պետք է վստահորդին պարզաբանի դրանց կիրառման անթույլատրելիության մասին և ցույց տա նույն կամ նման արդյունքի հասնելու հնարավոր օրինական ճանապարհը, և եթե այդուհանդերձ չի հաջողվում վստահորդի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից, ապա փաստաբանը պարտավոր է հրաժարվել վստահորդի հանձնարարությունը ընդունելուց:

3.1.7 Իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունն ընդունելիս փաստաբանը պետք է նկատի ունենա այն կատարելու իր մասնագիտական հնարավորությունները և պարտավոր է հրաժարվել հանձնարարությունն ընդունելուց, եթե պարզում է, որ Օրենքով կամ սույն Կանոնագրքով ներկայացվող պահանջներն իր կողմից չեն կարող պահպանվել: Փաստաբանը չպետք է ստանձնի այնպիսի գործ, որով վստահորդին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու համար չունի անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, բացառությամբ, երբ վստահորդի համաձայնությամբ

համագործակցում է անհրաժեշտ գիտելիքներ և փորձ ունեցող այլ փաստաբանի հետ:

3.1.8 Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

3.1.9. Փաստաբանը չի կարող ընդունել նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու առաջարկ: Եթե փաստաբանը չկարողանա ապացուցել, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, ապա Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է հաստատված համարել այն փաստը, որ փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի առաջարկով: Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է հաշվի առնել նաև փաստաբանի կողմից իրականացրած գործողությունների բնույթը՝ վստահորդի շահերը պատշաճ կարգով ներկայացված լինելու տեսանկյունից: Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելու և վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց տված չլինելու արարքների համակցությունը հանդիսանում է ***ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

3.1.10 Փաստաբանն իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից: Փաստաբանի կողմից քաղաքացիական, քրեական կամ վարչական գործով վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում տալը, ինչպես նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից վստահորդի օգտին վերջնական որոշում կայացման խոստում տալը, հանդիսանում է ***ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

3.1.11 Արձակուրդ մեկնելու կամ հարգելի այլ պատճառով իր վստահորդին վերաբերող դատական նիստին, վարչական վարույթին, դատավարական կամ քննչական գործողությանը մասնակցելու անհնարինության դեպքում, փաստաբանը պարտավոր է նախապես տեղեկացնել իր վստահորդին այդ

մասին և ձեռնարկել իրենից կախված միջոցները նշված նիստը կամ գործողության կատարումը հետաձգելու համար:

3.2. Հանձնարարությունն ընդունելը բացառող հանգամանքները, շահերի հակասություն

3.2.1 Փաստաբանն իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, եթե տվյալ գործով մասնակցող պաշտոնատար անձի հետ գտնվում է ազգակցական կապի մեջ: Փաստաբանը իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, եթե տվյալ գործով մասնակցել է որպես վկա, բացառությամբ այն դեպքի, երբ վարույթն իրականացնող մարմինը փաստաբանին ներգրավել է որպես վկա հետագայում վերջինիս մասնակցությունը տվյալ գործով փաստաբանի կարգավիճակով բացառելու նպատակով և փաստաբանի կողմից տրված ցուցմունքը չունի էական նշանակություն ու չի (չի կարող) դրվել գործի լուծման հիմքում: Փաստաբանը իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, եթե անձնական հարաբերությունների մեջ է գտնվում այն պաշտոնատար անձի հետ և այդ հարաբերությունները կարող են ազդեցություն ունենալ գործի լուծման վրա:

3.2.2 Փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը: Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն վստահորդի գրավոր համաձայնության պայմանով (այս պայմանը համարվում է պահպանված նաև փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և վստահորդի միջև կնքված պայմանագրում համապատասխան վերապահում կատարված լինելու դեպքում): Գրավոր համաձայնությունը համարվում է վավեր, եթե պարունակում է տեղեկություններ այն մասին, որ փաստաբանը վստահորդին տեղեկացրել է նման համաձայնություն տալու իրավական հետևանքների և հնարավոր ռիսկերի մասին: Այն դեպքում, երբ փաստաբանի վստահորդը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական հիմնարկ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություն է, ապա փաստաբանը (փաստաբանական գրասենյակը) կարող է այդ սուբյեկտի դեմ ներկայացնել իր վստահորդի շահերը, բացառությամբ, երբ՝ (1) ներկայացվող նոր գործն ուղղակիորեն կամ

անուղղակիորեն կապված է նախկին գործի կամ դրա որոշ էական հանգամանքների հետ, կամ (2) փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և նախորդ վստահորդի միջև կնքված պայմանագրում նախատեսվել է սահմանափակում՝ ապագայում այդ վստահորդի դեմ որևէ գործ ներկայացնելու վերաբերյալ:

3.2.3 Այն դեպքում, երբ փաստաբանը վստահորդի գործը վերցրել է ուսումնասիրելու համար, որից հետո վստահորդի հետ համաձայնության չեն եկել ծառայություն մատուցելու հարցի կապակցությամբ, իսկ հետագայում փաստաբանին է դիմել այդ գործով հակառակորդ կողմը, ապա փաստաբանը պարտավոր է ղեկավարվել Կանոնագրքի 3.2.2 կետով, բացառությամբ 3.2.4 կետում նշված դեպքերի:

3.2.4 Կանոնագրքի 3.2.3 կետում նշված դեպքում, փաստաբանը կարող է վստահորդի գործը վերցնել, եթե պարզում է, որ՝

- նախորդ վստահորդի դերում հանդես եկած անձը դիտավորյալ է դիմել փաստաբանին, Կանոնագրքի 3.2.2 կետում նշված այդ գործով զբաղվելը բացառող հանգամանքներ ստեղծելու համար.
- նախորդ վստահորդը նույն կերպ դիմել է տվյալ գործի ոլորտում մասնագիտացում ունեցող այլ փաստաբանների՝ դիմելու պահին որևէ փաստաբանի հետ փաստացի համագործակցություն ունենալու պայմանում.
- նախկին վստահորդը փաստաբանին չի հայտնել գաղտնի տեղեկություններ, իսկ հաղորդած տեղեկությունները հանրամատչելի են եղել.
- փաստաբանը իրավաբանական օգնություն ցույց չի տվել վստահորդին:

Սույն ենթակետում նշված հնարավորությունը չի գործում, եթե փաստաբանը նախկին վստահորդից գործին ծանոթանալու համար հոնորար է ստացել:

3.2.5 Փաստաբանն իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3.2.6 Փաստաբանը չի կարող միևնույն գործի վերաբերյալ խորհուրդ տալ, ներկայացնել կամ գործել երկու կամ ավելի վստահորդների անունից, եթե վստահորդների միջև առկա է շահերի հակասության վտանգ:

3.2.7 Փաստաբանը պետք է դադարեցնի գործել երկուսի կամ բոլոր շահագրգիռ կողմերի օգտին, երբ վստահորդների միջև ծագում է շահերի հակասություն և երբ առկա է վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ կամ երբ փաստաբանի անկախությունը կարող է սահմանափակվել:

3.2.8. Փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում

է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:

3.2.9 Սույն կետի իմաստով սահմանափակումները գործում են նույնիսկ այն դեպքում, երբ նախկին և նոր վստահորդներին փաստաբանական ծառայություն են մատուցել (մատուցում) նույն փաստաբանական գրասենյակի տարբեր փաստաբաններ: Փաստաբանական գրասենյակի փաստաբանի կարգավիճակ ունեցող տնօրենը պարտավոր է չթույլատրել այսպիսի իրավիճակներ: Սույն ենթակետում նշված դեպքում պատասխանատվության կարող են ենթարկվել նույն փաստաբանական գրասենյակի գործին մասնակցող փաստաբանները, ինչպես նաև փաստաբանական գրասենյակի տնօրեն հանդիսացող փաստաբանը՝ ելնելով նշված սահմանափակման վերաբերյալ նրանց իրազեկված լինելու հանգամանքից:

3.2.10 Պալատի կարգապահական հանձնաժողովի կողմից փաստաբանին սույն կետով նախատեսված խախտման համար պատասխանատվության ենթարկելուց հետո, տվյալ վստահորդի շահերը կրկին ներկայացնելու կամ շահերի ներկայացման գործողությունները չդադարեցնելու արարքը հանդիսանում է ***ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

3.2.11 Սույն կանոնագրքի 3.2 կետի պահանջները վերաբերում են նաև փաստաբանական գրասենյակներին, բացառությամբ հանրային պաշտպանի գրասենյակի: Նշված պահանջների պահպանման պարտականությունը կրում է փաստաբանական գրասենյակի գործադիր մարմնի փաստաբան ղեկավարը կամ անհատ ձեռնարկատեր փաստաբանը:

3.2.12 Առնվազն 3 փաստաբան աշխատակից ունեցող փաստաբանական գրասենյակը պետք է ունենա շահերի հակասության և վստահորդի հանձնարարությունը բացառող, Օրենքով կամ սույն Կանոնագրքով սահմանված հանգամանքների կանխարգելմանն ու մշտադիտարկմանն ուղղված ներքին իրավական ակտ (քաղաքականություն, հայեցակարգ, կարգ, կանոնակարգ, ընթացակարգ, հրահանգ կամ այլ իրավական ակտ):

3.2.13 Սույն կանոնագրքի 3.2.11 կամ 3.2.12 ենթակետում նշված խախտումը հիմք է Փաստաբանական գրասենյակի գործադիր մարմնի փաստաբան ղեկավարին կամ անհատ ձեռնարկատեր փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, եթե փաստաբանական գրասենյակի նույն կամ տարբեր փաստաբաններ են ներկայացրել փաստաբանական գրասենյակի վստահորդների հակասող շահերը:

3.3. Հոնորարը

3.3.1 Վարձատրությունը (հոնորարը), որը փաստաբանական գրասենյակը ստանում է, պետք է ամբողջապես բացահայտվի վստահորդին: Հոնորարի չափի և վճարման կարգի շուրջ համաձայնության են գալիս կողմերը՝ իրենց հայեցողությամբ: Հոնորարի չափի մեջ չի ներառում փաստաբանի կատարած այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են հանձնարարության կատարման համար (մասնավորապես՝ տրանսպորտային, թարգմանչական կամ մասնագետներին հրավիրելու, տպագրության, պատճենահանման, փոստային և նոտարական ծախսերը, ինչպես նաև այլ դատական ծախսերը), եթե կողմերի համաձայնությամբ այլ բան չի նախատեսվել:

3.3.2 Փաստաբանի հոնորարը կարող է կազմվել ժամավճարից, կայուն գումարից կամ կողմերի համաձայնությամբ ընդունելի այլ հաշվարկից: Հոնորարի չափը կարող է փոփոխվել պայմանագրով փաստացի ստանձնած պարտավորությունների ծավալի փոփոխմանը համաչափ, ինչպես նաև ըստ հանձնարարության կատարման ժամկետների, վստահորդի նոր կամ լրացուցիչ առաջադրանքի, եթե դրանք ընդունվում են փաստաբանի կողմից և/կամ առանց դրանց հիմնական հանձնարարությունը կատարել հնարավոր չէ:

3.3.3 Փաստաբանին և փաստաբանական գրասենյակին արգելվում է կիսել իր հոնորարը փաստաբան չհանդիսացող անձի հետ, բացառությամբ փաստաբանական գրասենյակի ծախսերին ուղղված վճարումներին, ինչպես նաև փաստաբանական գործունեությունն իրականացնելու հետ կապված մասնագետներին հրավիրելու վճարումներին: Այն դեպքում, երբ փաստաբանական գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպության մասնակից փաստաբանը իր բաժնեմասերը (բաժնետոմսերը) օտարել է փաստաբան չհանդիսացող անձի (բացառությամբ փաստաբանի ընտանիքի անդամների) կամ այդպիսի կազմակերպության բաժնեմասեր է ձեռք բերել, որտեղ, որպես մասնակիցներ կան նաև փաստաբան չհանդիսացող անձինք, ապա Պալատի նախագահի կողմից գրավոր նախազգուշացվելու պահից երեք ամսվա ընթացքում, պարտավոր է վերականգնել նախկին վիճակը:

3.4. Մեկից ավելի փաստաբանների կողմից հանձնարարությունն ընդունելը

3.4.1 Վստահորդի ցանկությամբ կամ նրա համաձայնությամբ թույլատրվում է մեկից ավելի փաստաբանի մասնակցությունը նույն գործով: Այդ դեպքում պայմանագրով կարող են նախատեսվել և բաշխվել հանձնարարությունը կատարող փաստաբանների պարտականությունները,

լիազորությունները և գործողությունների շրջանակը:

3.4.2 Այն դեպքում, երբ վստահորդը կոնկրետ փաստաբանի հետ իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր կնքելուց հետո առանց նրա հետ համաձայնեցնելու մեկ այլ փաստաբանի հետ կնքում է նույն հանձնարարության հետ կապված պայմանագիր, ապա փաստաբաններից յուրաքանչյուրը, ով տեղեկացված չի եղել այլ փաստաբան ներգրավելու մասին, իրավունք ունի հրաժարվել իր հետ կնքված պայմանագրից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով արգելվում է փաստաբանին իրավական օգնություն ցույց տալուց հրաժարվելը:

3.4.3 Այն դեպքում, երբ հանձնարարությունը ստանձնել է փաստաբանական գրասենյակը, ապա վերջինս է որոշում փաստաբաններին, որոնք պետք է իրավական օգնություն ցույց տան վստահորդին, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

3.5. Հանձնարարության կատարման փուլում փաստաբանի գործողությունները

3.5.1 Վստահորդի հանձնարարությունը կատարելու ընթացքում փաստաբանին չի թույլատրվում օգտվել օրենքով արգելված միջոցներից:

3.5.2 Փաստաբանը պարտավոր է հրաժարվել իրավական օգնության ցույց տալու պայմանագրից, եթե իր կողմից տվյալ վստահորդին իրավական օգնություն ցույց տալիս հանձնարարության կատարման փուլում պարզ է դարձել Կանոնագրքի 3.2 կետով նախատեսված հանգամանքներից մեկը:

3.5.3 Փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի (վստահորդի) ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:

3.5.4 Համոզվելով, որ պաշտպանյալին մեղսագրված արարքը հիմնավորված չէ կամ գործով ձեռք բերված ապացույցները վկայում են ավելի թեթև հանցագործության մասին, իսկ պաշտպանյալն ընդունում է իրեն ներկայացված մեղադրանքը, փաստաբանը պարտավոր է քննարկել այդ հարցերը իր պաշտպանյալի հետ ու համաձայնեցնել, ըստ այդմ, նոր դիրքորոշում ընդունելու հարցը: Եթե նոր դիրքորոշման կապակցությամբ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա փաստաբանն իրավունք ունի զբաղեցնել իր պաշտպանյալից անկախ, ինքնուրույն դիրքորոշում, սակայն

իրավասու չէ անել հայտարարություններ վստահորդի մեղավորության ապացուցված լինելու վերաբերյալ, եթե վերջինս ժխտում է դա:

3.5.5 Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

3.6. Հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացումը

3.6.1 Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

3.6.2 Տեղեկացումը կարող է կատարվել հեռախոսի, էլեկտրոնային փոստի, նամակագրության կամ անձնական զրույցների միջոցով:

3.6.3 Իր գործունեության հասցեն կամ հեռախոսահամարը փոխելու դեպքում, փաստաբանը պարտավոր է վստահորդներին, ինչպես նաև Պալատին, ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր հասցեի կամ հեռախոսահամարի մասին:

3.7. Հաշտության համաձայնությունը

3.7.1 Փաստաբանը պարտավոր է ձեռնարկել իրենից կախված ողջամիտ միջոցները, վեճը հաշտությամբ լուծելու համար: Հակառակորդ կողմից հաշտության համաձայնության ողջամիտ առաջարկը փաստաբանը պարտավոր է քննարկել իր վստահորդի հետ, բացառությամբ այն դեպքի, երբ հակառակորդ կողմից այդպիսի առաջարկ ներկայացնելը միտում ունի անհարկի ձգձգել դատական գործը:

3.7.2 Փաստաբանը չպետք է արհեստական վեճեր ստեղծի (դատական գործեր հարուցի) վստահորդի համար՝ հոնորարի չափն ավելացնելու նպատակով, բացառությամբ երբ դատական նոր գործի հարուցումը անհրաժեշտ է եղել վստահորդի ընդհանուր գործի ելքի վրա ազդելու կամ վստահորդի համար այլ բարենպաստ իրավիճակ ստեղծելու համար:

3.7.3 Հաշտության համաձայնություն կնքելու լիազորություն ունենալու դեպքում էլ, փաստաբանը պարտավոր է հաշտության համաձայնության տեքստը կամ դրա էական պայմանները համաձայնեցնել (գրավոր, էլեկտրոնային փոստի կամ այլ միջոցով) վստահորդի կամ պատվիրատուի հետ, բացառությամբ այն դեպքի, երբ վստահորդը բացակայում է Հայաստանի Հանրապետությունից և հաշտության համաձայնությունը ամբողջությամբ արտացոլում է վստահորդի շահերը: Առանց վստահորդի համաձայնության ի վնաս նրա շահերի հաշտության համաձայնություն կնքելը, որը էական վնաս է պատճառել վստահորդին կամ նրա վրա դրել է անհարկի պարտավորություն, հանդիսանում է ***ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

3.8. Իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի լուծումը

3.8.1 Իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը փաստաբանի և վստահորդի փոխադարձ համաձայնությամբ կարող է լուծվել ցանկացած պահի:

3.8.2 Փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրով, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝

1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը.

2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,

5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,

6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

3.8.3 Փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է բացատրել վստահորդին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից

հրաժարվելու պատճառները և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին: Փաստաբանն իրավունք չունի թողնել գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը կարող է հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն: Եթե փաստաբանը, ցանկանում է հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից դատարանի վճռի, դատավճռի կամ դատական այլ ակտի բողոքարկման համար նախատեսված վերջնաժամկետից յոթ օրը չգերազանցող ժամկետում, իսկ վստահորդը հնարավորություն չունի այդ կարճ ժամկետում օգտվել այլ փաստաբանի իրավական օգնությունից, ապա փաստաբանը պարտավոր է այդ փուլում իրավական օգնություն ցույց տալը շարունակել և կատարել իրավական օգնության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները՝ պատշաճ կարգով, ինչից հետո հրաժարվել պայմանագրից:

3.8.4 Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

2) վերադարձնել հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի հատուցման համար նախատեսված և չծախսված միջոցները.

3) վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

3.9. Վստահորդի դրամական միջոցը

3.9.1 Փաստաբանը, ով դրամական միջոց է ձեռք բերում իր վստահորդի կամ երրորդ կողմի հաշվին (այնուհետ՝ վստահորդի դրամական միջոց), պետք է հանձնի վստահորդի բանկի հաշվարկային հաշվեհամարին կամ Պալատի հաշվին փաստաբանի անվամբ բացված ենթահաշվին, եթե իր և վստահորդի գրավոր համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Վստահորդի հաշվեհամարը պետք է առանձին լինի փաստաբանի հաշվեհամարներից: Վստահորդների դրամական միջոցները ստացող փաստաբանի կողմից դրանք պետք է հանձնվեն հաշվեհամարին, քանի դեռ դրամական միջոցի տերը իր համաձայնությունը չի տվել, որ դրամական միջոցը կարող է օգտագործվել այլ կերպ:

3.9.2. Փաստաբանը պետք է պահպանի ամբողջական և ճշգրիտ

գրառումներ՝ զետեղելով վստահորդի դրամական միջոցի հետ բոլոր գործարքները և տարբերակելով վստահորդի դրամական միջոցը փաստաբանի ունեցած այլ դրամական միջոցից:

3.10. Մասնագիտության ապահովագրում

3.10.1. Հնարավորության դեպքում փաստաբաններն իրենց մասնագիտական գործունեությունից դուրս պետք է ապահովագրված լինեն քաղաքացիական իրավական պատասխանատվությունից այնքանով, որքանով այդ անհրաժեշտ է՝ հաշվի առնելով այն ռիսկերի բնույթը և չափը, որոնք պատահում են իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս:

3.10.2. Եթե դա անհնար է, փաստաբանը պետք է տեղյակ պահի վստահորդին իրավիճակի և նրա հետևանքների մասին:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

4.1. Վարվելակերպի կանոնները դատարանում

Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:

4.2. Արդար դատաքննություն

Փաստաբանը վստահորդի շահերը ներկայացնելիս պետք է օգտվի արդար դատաքննության հնարավոր միջոցներից և իր հերթին նպաստի դատավարության արդար իրականացմանը:

4.3. Կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն

Փաստաբանը երբեք չպետք է գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացնի դատարանին:

4.4. Դատավորների հետ շփումներ

Փաստաբանը կարող է դատավորի հետ շփվել մասնագիտական քննարկումներ կատարելու նկատառումներից ելնելով, բացառությամբ, եթե տվյալ դատավորը քննում է փաստաբանի մասնակցությամբ գործ, և քննարկումը վերաբերվում է այդ գործին կամ կարող է այդպիսի տպավորություն թողնել:

Փաստաբանի կողմից դատավորի հետ սոցիալական ցանցում «ընկեր» հանդիսանալու կամ նույն հետաքրքրությունների խմբում գտնվելու հանգամանքը ինքնին չի կարող հանդիսանալ նրանց կախյալ հարաբերությունների ապացույց (հիմք):

ԳԼՈՒԽ 5. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Մասնագիտության ընդհանուր բնութագիրը

5.1.1 Մասնագիտության ընդհանուր բնութագիրը պահանջում է փաստաբանների միջև վստահություն և համագործակցություն, ինչը ելնում է վստահորդի շահերից, և այն նպատակ է հետապնդում, որ փաստաբանները խուսափեն ավելորդ դատավեճերից և այլ վնասաբեր գործողություններից, որոնք կարող են վատ անդրադառնալ մասնագիտության հեղինակության վրա: Այս կանոնը չի կարող մեկնաբանվել, որպես մասնագիտության շահերը ընդդեմ վստահորդի շահերի դասելուն ուղղված կոչ:

5.1.2 Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական գործընկերներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:

5.2. Ընդհանուր սահմանափակումները

5.2.1 Փաստաբանը չպետք է՝

(1) թույլ տա այլ փաստաբանի պատիվը, արժանապատվությունը կամ համբավն արատավորող գործողություններ կամ արտահայտություններ (ներառյալ՝ չպետք է այլ փաստաբանին վիրավորական քննադատի).

(2) վստահորդին դրդի այլ փաստաբանի հետ ունեցած իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագրից հրաժարվել,

(3) այլ փաստաբանի վստահորդի մոտ վարկաբեկի նրա փաստաբանին՝ բացասական իմաստով արտահայտվելով փաստաբանի վարձատրության պայմանների կամ մասնագիտական հմտությունների վերաբերյալ.

(4) փաստաբանը չպետք է օգտագործի այլ փաստաբանական գրասենյակի կամ անհատ ձեռնարկատեր փաստաբանի ապրանքային նշանը

կամ այդ նշանին շփոթելու աստիճանին նման ապրանքային նշանը:

5.3. Շփումը հակառակ կողմի հետ

Փաստաբանը չպետք է որևէ դատական գործի կամ խնդրի հետ կապված անմիջական տեղեկություն փոխանակի հակառակորդ կողմի հետ, եթե այդ կողմին ներկայացնում է մեկ այլ փաստաբան՝ առանց այդ փաստաբանի համաձայնության (ավելին, վերջինս պետք է տեղեկացված լինի նման հաղորդակցության մասին), բացառությամբ այն դեպքի, երբ հակառակորդ կողմն ինքն է նախաձեռնել հանդիպումը կամ այդ գործընթացի ժամանակ հակառակորդ կողմի փաստաբանը ներկա չէ: Փաստաբանը պարտավոր է սույն կետում նշված կանոնի մասին նախազգուշացնել հակառակորդ կողմին և հետագա քննարկումները կազմակերպել նրա փաստաբանի ներկայությամբ:

Սույն կետում նշված սահմանափակումը չի տարածվում փաստաբանի կողմից իր վստահորդի անունից կամ իր վստահորդի շահերի պաշտպանության նպատակով հակառակորդ կողմին ուղղված հարցումների, դիմումների, պահանջների, ինչպես նաև դատավարական փաստաթղթեր ներկայացնելու դեպքերի նկատմամբ:

ԳԼՈՒԽ 6. ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Փաստաբանի փոխհարաբերությունները հետաքննության, նախաքննության մարմինների, ինչպես նաև դատախազի հետ

6.1.1 Վստահորդի շահերը մինչդատական վարույթում ներկայացնելու ընթացքում փաստաբանի գործողությունները պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի պահանջներին:

6.1.2 Մինչդատական վարույթում փաստաբանն իրավունք չունի օրենքով արգելված միջոցներով ազդել տվյալ գործով վարույթ իրականացնող մարմնի վրա:

6.1.3 Մինչդատական վարույթում փաստաբանը պարտավոր է հարգանքով վերաբերվել դատավարության մասնակիցներին և մնալ կոռեկտության շրջանակներում, իսկ դատավարության մասնակիցների (մեղադրող կողմի և այլն) գործողություններին կամ ոչ կոռեկտ արտահայտություններին անդրադառնալ օրենքով սահմանված եղանակներով՝ դիմումների, հայտարարությունների, միջնորդությունների, բացարկների, առարկությունների կամ բողոքների միջոցով:

6.2. Փաստաբանի վարքագիծը ձերբակալվածներին պահելու վայրերում, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ

հիմնարկներում

6.2.1 Փաստաբանը պարտավոր է ձերբակալվածներին պահելու վայրերում, կալանավորվածներին պահելու վայրերում, ինչպես նաև ուղղիչ հիմնարկներում՝

1) պահպանել սահմանված կարգը.

2) իր վստահորդին կամ այլ անձի չփոխանցել արգելված իրեր (առարկաներ):

6.2.2 Իր վստահորդի մարմնի վրա վնասվածք տեսնելու դեպքում, փաստաբանը պարտավոր է պարզել դրա պատճառը և համապատասխան միջոցներ ձեռնարկել իր վստահորդի իրավունքները պաշտպանելու համար:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԸ

7.1. Հանրային պաշտպանի պատասխանատվության սահմանները

7.1.1 Հանրային պաշտպանը, բացի իր աշխատանքային կարգապահական պատասխանատվությունից, կարող է ենթարկվել պատասխանատվության Կանոնագրքի կանոնների խախտման համար, ինչպես մյուս փաստաբաններին վերաբերող դրույթների խախտման, այնպես էլ սույն գլխում նախատեսված դրույթների խախտման համար:

7.1.2 Հանրային պաշտպանին աշխատանքային կարգապահական պատասխանատվության ենթարկելը արգելք չէ Կանոնագրքի կանոնների խախտման հիմքով նրան պատասխանատվության ենթարկելու համար:

7.2. Հանրային պաշտպանի այլ գործով զբաղվելու և նվեր ստանալու անթույլատրելիությունը

7.2.1 Հանրային պաշտպանը չի կարող այլ գործով իրավական օգնություն ցույց տալ, բացառությամբ Պալատի խորհրդի կողմից հաստատված հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգով սահմանված դեպքերի: Սույն ենթակետում նշված կանոնի խախտումը, որը կատարել է այդ կանոնի համար վերջին մեկ տարվա ընթացքում պատասխանատվության ենթարկված հանրային պաշտպանը, հանդիսանում է ***ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

7.2.2 Հանրային պաշտպանն (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող անվճար իրավաբանական օգնություն տրամադրող անձանց ցուցակում կամավոր ընդգրկված հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանն) իրավունք չունի իր վստահորդից (սույն գլխի

իմաստով վստահորդ է հանդիսանում օգնության դիմած անձը, ում անհատույց իրավական օգնություն է ցույց տրվում) նվեր ընդունել գումար (անկախ չափից) կամ երեսուն հազար ՀՀ դրամ արժեքը գերազանցող իր: Այդպիսի գումար կամ թանկարժեք նվեր ստանալու դեպքում, հանրային պաշտպանը պարտավոր է մեկ օրվա ընթացքում, գրավոր ծանուցում ներկայացնել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին կամ Պալատի նախագահին ու ստացածը հանձնել Պալատին: Սույն ենթակետում նշված կանոնի խախտումը հանդիսանում է ***ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

7.2.3. Սույն կետում նշված սահմանափակումները չեն տարածվում ոչ լրիվ դրույքաչափով աշխատող հանրային պաշտպանների նկատմամբ՝ իրենց մասնավոր գործերով վստահորդների հետ հարաբերություններում:

7.3. Շահերի բախում հանրային պաշտպանի գրասենյակում

7.3.1 Եթե հանրային պաշտպանի գրասենյակի հանրային պաշտպանները ներկայացնում են հակառակորդ կողմերի շահեր, ապա պարտավոր են միմյանցից գաղտնի պահել գործի նյութերը և այդ գործը միմյանց միջև քննարկման առարկա չդարձնել:

7.3.2. Կանոնագրքի 7.3.1 ենթակետում նշված դեպքում, հանրային պաշտպանները պարտավոր են ծանուցումներ ներկայացնել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին և Պալատի նախագահին՝ և այդ պահից սկսած՝ գործի հսկողության համար այդ գործը ներկայացնել միայն Պալատի նախագահի կողմից սահմանած կարգով նախատեսված Պալատի աշխատակցին:

ԳԼՈՒԽ 8. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԸ ԵՎ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԸ

8.1. Փաստաբանի օգնականը

8.1.1 Փաստաբանի օգնականը Պալատի խորհրդի կողմից փաստաբանի օգնականի արտոնագիր ստացած անձն է, ով համապատասխանում է Օրենքի պահանջներին, և ներկայացված է իր ղեկավար փաստաբանի կողմից:

8.1.2 Փաստաբանի օգնականը պարտավոր է ենթարկվել իր ղեկավար փաստաբանին և գործել նրա հսկողության ներքո:

8.1.3 Փաստաբանի օգնականի նկատմամբ տարածվում են փաստաբանին վերաբերող վարքագծի կանոնները, այնքանով, որքանով այդ կանոնները կարող են վերաբերել փաստաբանի օգնականին:

8.1.4 Փաստաբանի օգնականը պարտավոր է էլեկտրոնային հասցե ունենալ և այն տրամադրել Պալատին՝ իր հետ կապ հաստատելու նպատակով:

Փաստաբանի օգնականի տրամադրած էլեկտրոնային հասցեով ուղարկված գրությունը կամ ծանուցումը համարվում է պատշաճ ծանուցում, նույնիսկ այն դեպքում, երբ փաստաբանի օգնականը փոխել է այդ հասցեն և Պալատին չի նախազգուշացրել դրա մասին:

8.2. Փաստաբանի օգնականին պատասխանատվության ենթարկելը

8.2.1 Փաստաբանի օգնականը սույն կանոնագրքի պահանջները խախտելու դեպքում ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքով և Կանոնագրքով սահմանված կարգով:

8.2.2 Փաստաբանի օգնականին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելիս, ստուգվում է նաև նրա ղեկավար փաստաբանի կողմից պատշաճ հսկողություն իրականացնելու հանգամանքը և պատշաճ հսկողություն չիրականացնելու փաստ հայտնաբերելիս կարող է պատասխանատվության ենթարկվել նաև ղեկավար փաստաբանը:

8.3. Այլ պետության փաստաբանը

8.3.1 Այլ պետության փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեությունն իրականացնում է Օրենքով, փաստաբանների պալատի կանոնադրությամբ և սույն կանոնագրքով սահմանված կարգով:

8.3.2 Պալատի կողմից հավատարմագրված այլ պետության փաստաբանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելիս տարածվում են Հայաստանի Հանրապետության փաստաբաններին վերաբերող վարքագծի կանոնները, այնքանով, որքանով այդ կանոնները կարող են վերաբերվել այլ պետության փաստաբանին:

8.4. Հավատարմագրի գործողության դադարեցումը

8.4.1 Այլ պետության փաստաբանին տրված հավատարմագրի գործողությունը դադարեցվում է, եթե այլ պետության փաստաբանը խախտել է սույն կանոնագրքի պահանջները:

8.4.2 Այն դեպքում, երբ այլ պետության փաստաբանի կողմից առաջին անգամ թույլ տրված ոչ էական խախտումը հնարավոր է վերացնել և այն էական վնաս չի պատճառել վստահորդին, Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է նկատողություն հայտարարել այլ պետության փաստաբանին:

ԳԼՈՒԽ 9. ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9.1. Արտոնագրի գործողությունը դադարեցնելու հիմքերը

9.1.1 Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝ մեկ տարվա ընթացքում երկու անգամ կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանի կողմից կրկին կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքում, բացառությամբ անդամավճար չվճարելու հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքերի, ինչպես նաև այն դեպքի, երբ խախտումները թույլ են տրվել մեկ վարույթի (նախաքննության, դատաքննության և այլ վարույթի) շրջանակում:

9.1.2 Կարգապահական պատասխանատվության ենթարկված փաստաբանի կողմից մեկ տարվա ընթացքում նույնանման խախտում կատարելը համարվում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, բացառությամբ՝

ա. սույն կանոնագրքի 2.9 կետում կամ 9.1.3 ենթակետում նշված դեպքի,

բ. այն դեպքի, երբ առաջին կարգապահական խախտման համար փաստաբանի նկատմամբ կիրառվել է ամենամեղմ կարգապահական տույժը՝ նկատողություն.

գ. սույն կանոնագրքի 4-րդ և 6-րդ գլուխներում նշված դեպքերի:

9.1.3 Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել առնվազն տասնութ ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացումը փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը կայացնելու օրվա դրությամբ փաստաբանների պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի: Սույն ենթակետում նշված վճարումն ամբողջությամբ կատարելու դեպքում, Պալատի կարգապահական հանձնաժողովը փաստաբանի նկատմամբ կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն:

9.1.4 Սույն կետի 9.1.1 և 9.1.2 ենթակետերի իմաստով՝

ա. փաստաբանը կարգապահական պատասխանատվության ենթարկված է համարվում այն օրվանից, երբ ուժի մեջ է մտել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը.

բ. փաստաբանի կողմից կանոնագրքի խախտում կատարելը հաշվարկվում է խախտման փաստացի կատարման օրվա դրությամբ, անկախ

Պալատի կարգապահական հանձնաժողովի որոշման կայացման կամ ուժի մեջ մտնելու պահից.

գ. մեկ տարվա ժամկետի հաշվարկը սկսվում է առաջին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրվանից.

դ. նույնանման խախտում է համարվում Կանոնագրքի նույն կետի կամ ենթակետի կանոնի խախտումը:

9.1.5. Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել նաև սույն կանոնագրքում ուղղակիորեն նշված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում կատարելու դեպքում:

ԳԼՈՒԽ 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Կանոնագրքի մեկնաբանման իրավունքը պատկանում է Պալատի խորհրդին:

10.2 Պալատի խորհուրդը և կարգապահական հանձնաժողովը պարտավոր են ապահովել Կանոնագրքի միատեսակ կիրառումը: Պալատի խորհուրդը կամ կարգապահական հանձնաժողովը կարող են իր նախորդ դիրքորոշումը փոխել իրավունքի զարգացման նկատառումներից ելնելով: Այս դեպքում, Պալատի խորհուրդը կամ կարգապահական հանձնաժողովը պետք է ծանրակշիռ հիմնավորումներ ներկայացնի նախորդ դիրքորոշումը փոխելու անհրաժեշտության վերաբերյալ:

10.3 Այն դեպքում, երբ Կանոնագրքի փոփոխությամբ (լրացմամբ) սահմանվել է փաստաբանի կարգավիճակը վատթարացնող դրույթ, ապա այդ դրույթը հետադարձ ուժ չունի:

10.4 Այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագիրքը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը, ինչպես նաև կարգապահական հանձնաժողովը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:

10.5 Ենթակետը ուժը կորցրել է Պալատի ընդհանուր ժողովի 25.12.2022թ. թիվ 1/3–Լ որոշմամբ:

* * * * *